Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԱՐԹՈՒՐ ՄՈՎՍԻՍՅԱՆԻ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը

Արթուր Մովսիսյան

2. Զբաղեցրած պաշտոնը

ՀՀ գիտության կոմիտեի նախագահի տեղակալ

3. Գործուղման վայրը և ժամկետները

Ռուսաստանի Դաշնություն, ք. Իրկուտսկ, հուլիսի 8-ից 12-ը, 2023 թվական

4. Հրավիրող կողմը

Միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտ

5. Գործուղման նպատակը (աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)

Մասնակցություն Միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտի անդամ պետությունների լիազոր ներկայացուցիչների կոմիտեի նախագահի ենթակայությամբ գործող ֆինանսական հարցերով աշխատանքային խմբի հանդիպմանը

6. Քննարկված թեմաները

1. Միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտի անդամ պետությունների անդամավճարի ներքևի սահմանի կիրառման կարգի կատարելագործում,
2. Միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտին՝ Լեհաստանի, Ուկրաինայի և Չեխիայի անդամակցության դադարեցման հետ կապված հարցերի կարգավորումներ,
3. Միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտի Ֆինանսական և Լիազոր ներկայացուցիչների կոմիտեների նիստերի անցկացման ընթացակարգերի փոփոխություն:

7. *Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը*

Ա.Մովսիսյանը ներկայացրել է Միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտի անդամ պետությունների անդամավճարի ներկայում գործող հաշվարկի թերությունները և առաջարկել է վերանայել հաշվարկի մեխանիզմը՝ ժամանակավորապես

դադարեցնելով ներքևի սահմանի կիրառման մեխանիզմը և թողնելով միայն ՀՆԱ-ով հաշվարկի տարբերակը:

Ա.Մովսիսյանը հանդիպում է ունեցել Միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտի պատվիրակության անդամների, ինչպես նաև Ղազախստանի Հանրապետության, Կուբայի Հանրապետության և Մոնղոլիայի ներկայացուցիչների հետ:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Պայմանավորվածություն է ձեռք բերվել խորացնելու համագործակցությունը Միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտի հետ, մասնավորապես երիտասարդ գիտնականների վերապատրաստման, համատեղ միջոցառումների կազմակերպման, ինչպես նաև ՀՀ գիտության կոմիտեի դրամաշնորհային ծրագրերին Միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտի և անդամ պետությունների գիտնականների մասնակցության ուղղությամբ:

Որոշվել է Միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտի ղեկավարությանը առաջարկել՝ վերանայել անդամ պետությունների անդամավճարի ներքևի սահմանի կիրառման մեխանիզմը, մասնավորապես այն փոխարինելով անդամ պետությունների մասնագետների քվոտավորման մեխանիզմով, ինչպես նաև դիտարկել ՀՀ առաջարկը՝ անցումային փուլում ժամանակավորապես դադարեցնելու անդամ պետությունների անդամավճարի ներքևի սահմանի կիրառման մեխանիզմը:

Որոշվել է հավանություն տալ Ֆինանսական և Լիազոր ներկայացուցիչների կոմիտեների նիստերի անցկացման ընթացակարգերի փոփոխության նախագծերին: Վերջինիս անհրաժեշտությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ որոշ կարգավորումներ ընդունվել էին համաճարակի պայմաններում և վերանայման կարիք ունեին:

9.Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտի լիազոր ներկայացուցիչների և Ֆինանսական կոմիտեներին, ինչպես նաև Միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտի ղեկավարությանն առաջարկվել է ընդունել ի գիտություն ստորագրված արձանագրությունը և քայլեր ձեռնարկել վերջինով սահմանված առաջարկությունների կատարման ուղղությամբ:

10. Ստորագրությունը, ամսաթիվը

Արթուր Մովսիսյան

14.07.2023թ.